

So. Melunsk



Diocese of the Armenian Church of North America

314 East 35th Street, New York 16, N.Y. ★ MURRAY HILL 6-0710

ԱՌԱՋՆՈՐԳԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ
ՍԻՈՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Առաջնորդ

Archbishop Sion Manougian
Primate

Թիւ 339
Մայիս 27, 1959

Հոգեշնորհ
Տ. Սուրբիաս Մ. Վրդ. ԳալՏայեան
Նախագահ Միսական Խորհուրդի
Ս. Յարութիւն Եկեղեցւոյ
Ս. Միլիվոքի.

Սիրելի Հայր Սուրբիաս,

Ստացուած է 1959 Մայիս 18 թուակիր Զեր նամակը, ներփակեալ տեղեկագրով, ուր կըսուի թէ ընթացիկ տարւոյ Յունուար 25ին գումարուած Միսական ժողովին մէջ կատարուած է Միսական Խորհուրդի մասնակի ընտրութիւնը, եւ ներկայացնելով ընտրութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Թեմական կանոնադրութեան յօդուած 22ի համաձայն, տարեկան ծխական ժողովի որոշումները ժողովի թուականէն առ առաւելն երկու շաբաթ ետք պէտք է հաղորդել Թեմական Խորհուրդին առ ի վաւերացումն: Եղած այս զանցառութիւնը ոչ մէկ կերպով արդարանալի չենք գտներ, եւ կը յորդորենք ձեզի զայն չկրկնել:

Բացառաբար, այսու կը վաւերացնենք ընտրութիւնը հետեւեալ անձերուն, որոնք եկեղեցւոյդ պարտաճանաչ անդամներն են ու կը վայելեն ընտրողներու վստահութիւնը:

- Տիարք՝ Գաբրիէլ Գաբրիէլեան
- Պետրոս Փանոսեան
- Մեսրոպ Զէյիշեան
- Եսայի Եսայեան
- Հէրրի Գալուստեան՝ մէկ տարուան պաշտօնաշրջանով

Կօրհեննք նորընտիր անդամները եւ կը մաղթենք ձեզի եւ պատուարժան Միսական Խորհուրդիդ համերաշխ եւ բեղմնաւոր գործունէութիւն ի պայծառութիւն Հայց. Ս. Եկեղեցւոյ եւ յօգուտ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Աղօթակից

ՍԻՈՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի